

## ՄԵՌԱԾՆԵՐԻ ՄԻ ԶՐՈՅՅ \*

ՓՐԱՆՍՈՒԱ ԿՈՊՊԵՂԻԿ՝ Թարգմ. Մ. Նաասարղեանի

Երբ շագաղները վերստին զամեցին ու գերեզմանները ծածկեցին, երբ պաշտօնաւորները, զիտնականները, լրատուներն ու լուսանկարիչները հեռացել էին արդէն, երբ վերջապէս Պանթէօնի շամբարանը շափարկեց, Վոլտերի ու Ժան-Ժաք-Ռուսօի սուրերները, որ ներկայ էին գտնուել աներևութապէս իրենց շիրիմների պղծումին, յանկարծ տեսանելի դարձան \*\*:

Որովհետև ուրականների սովորութիւն է մարդկային կերպարանք հագնել միայն մեր բացակայութեան միջոցին, նկատի ունենալով որ նրանք ոչ մի կերպ չեն խորթում մեզպէս միս ու ոսկրից կերուած, կոշտ անձների ընկերակցութիւնից: Սրանով է բացատրուում, փակագծում ասած, թէ ինչու հոգեհարցները (=spirite) չկարացան երբէք,—որքան ինձ յայտնի է,—դուրս կոչել մի իսկական սուրբ, մի ուրական դոնէ, ինչպիսիներն ես տեսել եմ երբեմն Շապրլէ թափոնում անգլիականին նմանեցրած մի մելոդրամի ներկայացման միջոցին: Նրանք, հաւատացնում եմ ձեզ, խիստ ահառելի»

\* Անուանի ֆրանսիական հեղինակի այս փոքրիկ գրածքը ունի առանձին պոէմութիւնս Յայտնի է, որ կոպպէն Ռրէլֆուսի ինչդրի մէջ սորա գործի վերաքննութեան վերաբերութեամբ, որ ասել է թէ ճշմարտութիւնը երևան գալուն հակառակոյնների կողմն էր բռնած, նաև այն օրից, երբ Հանրին իւր կատարած կեղծիքը խոստովանեց: Թէ հակադէպօստեանները Յրանսիայի անցեալ դարի մեծ լեղափոխութեան և ներկայի կարգերի մասին ինչ կարծիքի են, այդ երևում է ներկայ ռուսացից-ից, որի մեծ միակողմանիութիւնը շատ աչկարա է:

ՄԱՆ. ԽՄԻ.

\*\* Վոլտերի և Ռուսօի, որպէս նաև Հիւգօի ածիւնները, պարլամենտների վճռով, ամփոփուած են Պարիզի Պանթէօնում:

ուրականներ էին, որոնք միտդրամի անձերից մէկի թրի հար-  
ւածների շէմ յուզմունքի ոչ մի նշան չէին արտայայտում: Հէնց  
սրանից է բղխում իմ սրտածած անսիրտ հուշերն շէպի մեր սեր-  
թուկաւոր կախարչները, որոնք չեն աշողում նոյն իսկ, իրենց ամ-  
բողջ մոգութիւնով, մի հասարակ մեքենագէտի խելացօրէն շասա-  
ւորած քանի մի հայկիների միջոցով ստացած հետեանքը ձեռք  
բերելու:

Օ՛ն ուրեմն, երբ Պանթէօնի շամբանները կրկին վերստացան  
իրենց անշորքն ու մենութիւնը, Վոլփէրն և Ժան-Ժաք-Ռուսօն —  
ւանշօշափելի ու կենդան ոգիներ: Ինչպէս երբեմն չայտարարել էր  
Secret de Miss Aurore-ի աֆիշը — չայտնւեցին իրենց սեփական  
շիրիմների առջև այն կերպարանքով, որ նրանք ունէին իրենց  
կեանքի վերջին դարիներում: Պերնէ-ի Նահապետը (= Վոլփէր) շիւրաւ  
ճանաչելի էր իր ձեւնափայտից, կեղծամից, սուրանկիւն  
պրոֆիլից ու մեքաքսէ գուլպաներ հագած մի զոյգ ոլոզներից,  
որոնք սրունգների փոխարէն էին ծառայում նրան: Այն ինչ Հռչա-  
կաւոր Ժընեցին (= Ռուսօ) հաղել էր հայկական տարազ — a Na-  
turca կաֆթան ու մամամուշի կոչած արախչին, որոնցով մեր  
արդի մահմեդական պարզամաւորի չափ ժողովրդականութիւն վաս-  
տակեց հին Պարսիկի փոշոցներում:

Հենց առաջին ակնարկից և եթ երկու փիլիսոփաները իրար  
ճանաչեցին և, զարմանալի բան, նրանց հայեացքները չարուս-  
չայտեցին իսկոյն և եթ ոչ աքելութիւն և ոչ զայրօյթ: Բացի մի  
քանի գերազանց չարկութիւններից, մահն ունի և այն լաւ կողմը,  
որ հաշտեցնում է ամենսթունշ թշնամիներին, նոյն իսկ զրական  
մարդկանցը, և որ, Կոսիւթի Երիւքսի<sup>1</sup> միւս ակի վրայ, զրչի  
մարդիկ շարտեցնում են իրենց գծու կռուներն ու ցած ակտ-  
յանութիւնը, որոնց պարճառով, կենդանութեան միջոցին ծաղրի  
ու յաճախ նոյն իսկ անպարուութեան են ենթարկուում:

Բուն արիստոկրատի կատարեալ շնորհալիութեամբ Կանդիդի<sup>2</sup>

<sup>1</sup> Յոյն առասպելական շառխքի գետ, որն իր ողմոր և շառն ար-  
ձանքներով բոլորում էր Տարտարոսի շուրջը:

<sup>2</sup> Կանդիդէ կոչում է Վոլփէրի հեղինակած մի փիլիսոփայական վէպը,  
որի հերոսը փչեալ անունն է կրում:

հայրը Դիմեց Թոստովանքի<sup>1</sup> (= Confessions) հեղինակին և ոսկի-հուռ բաձկունի գրպանից հանելով Պրուսիայի թագաւորի մինխա-տիւր պատկերով ու շողակներով զարդարուն քթախոտի քոսովը մեկնեց Ռուսօին, որը զըզւանքի ոչ մի նշան չարտայայտելով մի լիբը սրտունց վերցրեց մալուբա թիւթիւնից ու ներս շնչեց աղ-ճըկալից: —

Յանկարծ, մտարեւելով իրենց այսօրւայ տեսածը, երկու ըստ-ւերները արպայայտեցին իրենց Դէմքերովը, իւրաքանչիւրն իր ձեռն, այն զգացմունքները որոնցով զբաղւած էին: Վոլտէրն իր լժանդ ժպիտը — և Ռուսօն, վարի շուրթը ծամածուելով մի ամենամարդա-տեաց պոռչ արեց:

— Սիրելի ծան — Փաք, ստեց այն ժամանակ ծերունի Արուէնը<sup>2</sup>, համաձայնեցէք, որ այս վայրկենին մենք մի անարգ հանդէսին ներ-կայ գգնեցանք:

Անշուշտ, պատասխանեց Ռուսօն — մի հանդէս, որը կատար-ւեց զգառն մարդու սիրտը նողկանքով լեցնելու Դիտումով:

— Աւ ներկայումս մեզանով հիացոյները, կցեց Վոլտէրը, ձա-խողակներ են: Հաստապ ապացուցելու համար թէ Լուչովիկոս XVIII... մի նուրբ գրականագէտ, խնդրեմ նկատէք, շիտալիս պատկանող մի բանաստեղծ.. Մանօթ է ձեզ նրա՝ Մարի-Անտուանէտի հովհարի վրայ գրած հետեւեալ սիրունիկ քառեակը:

Շունչ արգելող անբանելի տօթերին,

Զըւարթութիւն բերում եմ ձեր խոհերին.

Լոկ զեփիւռ եմ հրաւիրում Դէպի ձեզ,

Տարփանքները ինքնին կըզան ասպարէզ:

Թովի: է, այնպէս չէ.....

Ապացուցելու համար ուրեմն թէ Լուչովիկոս XVIII-ը թոց-լատրել էր մեր գերեզմանների պղծումն ու մեր ածիւնների ցրւելը, տեսէք այս խակմտքները իրենց սրտին սիրելի մի առասպել ոչըն-

<sup>1</sup> Թոստովանք (= Confessions) Ռուսօի սեփական կենսագրութիւնն է, որի մէջ մանրամասնօրէն լիչադակում է իր գործած չարն ու բա-քին առանց խորանքի:

<sup>2</sup> Վոլտէրի ազգանունն է:

չացըրին, ազապ կացուցին մի խոշոր մեղքից Ռեստորացիան (Restauration), ու եզեւորներին, և այս րաճարում գրնուղ մեր Դրացի Վիքտոր Հիւզօի գրեածքի մի էջը պարտեցին... Որքան յընթացիկս եմ արդի գաղտնալեզին (argot), այս կարելի է անւանել փրոթոնը:

—Նամանաւանդ, շարունակեց ժընէի փիլիսոփան— շիրիմներէ յարգանքի վերաբերմամբ մեր սաները իրենց անցեալումն ունին մի քանի տգեղ յիշատակներ...:

—Այո, ընդհապեց Վոլտէրը ձեռքը կզակին տանելով մտախոհ ձեռով— Սեն Ռընի մայր րաճարի կոշտպտում, գերեզմանների պըղծում, Ֆրանսիացի արքանների ոսկրոտիները կոյուղիներում թափել... Լուչովիկոս XIV-ինը մասնաւորապէս, որի ներքոյնանն եմ գրել և Հենրիկոս IV-ինը, որի գովաբանութեան համար մի ամբողջ պոէմա եմ շարադրել, որը, խօսքս մեր մէջ մնայ, իմ գրեածքներից ամենաընտիրն է... Այո, պարզ է թէ, այն միջոցներում նողկալի է եղել ամբողջ, նա իր ամբողջ կատաղութիւնն է արտայայտել և ցոյց է տուել չախկալին յատուկ բնագոյները... Բայց ո՞վ է յանցաւորը: Պուք չէիք առաջինը, որ ժողովրդին ասացիք թէ նա գերիշխան էր, և, հետեւապէս, թոյլ տուիք նախօրօք ամեն բացարձակութիւն և չըքմեղանք ի նպաստ սինլեորի ծայրահեղութիւնների:

—Պատարակելու հարկ չըկայ, Վոլտէր: Այն սարսափների համար իմ չափ Դուք ևս պարտախանապու էք: Եթէ ես հետամտել եմ անիրագործելի մի քիմերայի, եթէ օդի մէջն եմ կառուցել, Դուք էիք, Դուք սակայն յարգանքի և իշխալի անխոնջ կործանիչը: Գաղափարը չի սխալուում երբ նա ընկերանում է մեր երկուսիս անունների հետ և մեծ յեղափոխութեան հեղինակների անունների շարքի մէջ առաջին տեղում մերն է Դասում. յեղափոխութեան, որի ժամանակ, կարելի է ասել, աշխարհս հանդիստութե եղաւ մարդկային շարութեան ժայթքումին, և որի արգասիքները, թէև սկիզբներում մոլի հիացման առարկայ, ներկայումս շապի վիճելի բարիքներ են թուում... Սակայն ես միայն ճշմարտութիւնն եմ երազել, բոլորի բարօրութիւնը... Ես կարծիք էի այդպիսի շարիքներ նախատեսել: Ես, որ մինչև արտասելու աստիճան զգայնօր էի, հանգիստ գրօսեող, բնութեան սերահար ու կաթ խմող, կարծիք էի հրատար-

կայել, որ ինձանից ծնւելու են այդ բոլոր արնէխուսներն ու ապա-  
ռաժ սիրտ ունեցողները. և որ յիշելով իմ՝ յանուն ընկելային Դաշ-  
նադրութեան՝ յայտարարած մահւան պատժի օրինաւորութիւնը,  
Ռոբեսպիլերը, այդ սարսափելի աշակերտս, կը ծածկէր ամբողջ Ֆրան-  
սիան կառավանդներով(=échafaud)... Ախ, մտքովս աւցնում է  
երբեմն թէ այն օրը, երբ ես այդ ճակատագրական երեսը գրեցի,  
հազարաւոր մահւան վճիռն սպորագրեցի:

— Ժան-Ժաք, սանահայր, ասեց իր հերթին նիհար ծերունին,  
որ այլ ևս չէր ժպտում— իմացէք, եթէ անչ կարող է ձեզ մխիթա-  
րել, որ ինքս էլ շատ յաճախ եմ կասկածում գործիս գերազանցու-  
թեան վրայ: Գործունէութիւնս սակայն իմ Դարի պատկերն է ընծա-  
լում, այնպէս թեթև և անբարոյ, որը բարբանջելով առաջին անգամ  
զարհուրելի խօսքեր արտասանեց: Ճիշդն ասած՝ երկնչում եմ թէ  
կախարչի այն աշակերտի չափ յանգուզն եղած լինեմ, որը շատ  
լաւ գիտէր ստրանին թաքստից Դուրս կանչելու պայմանախօսքը,  
բայց մոռացել էր նրան նորից իր բունը մտցնելու ողբհաղորդ բա-  
նաձևը. այն օրը, երբ ես տեսայ քահանաներին փողորելիս ու  
Պարիզի մայր տաճարում մի հասարակաց աղջկան իբր իմաստու-  
տութեան Դիցուհի պաշտելիս, ինքս ինձ հարց տուի լրջօրէն  
թէ, արդեօք իմ ժամանակի բարեկիրթ Դասակարգը իրաւունք  
ունէր ծափահարելու այնչափ սրտաբաց իմ ամբարիշտ ու լիտի-  
մոլութիւններին, և թէ արդեօք առաւել լաւ արած չէի լինի, որ  
փիլիսոփայական բառարանի (=Dictionnaire philosophique) մէջ  
գրած ստահկութիւններս ինձ համար պահէի:

— Եթէ գոնէ, կցեց Ժան-Ժաքը, կարելի լինէր ասել թէ յե-  
շափոխութիւնն անցաւ ինչպէս մի փոթորիկ, որից յետոյ երկինքը  
պարզւել է, և թէ այնքան սոսկալի յուզմունքներին կարգ ու խա-  
շաղութիւնն է յաջորդած: Սրանցից ոչ մէկը չի եղել սակայն: Այն-  
օրից ի վեր բոլոր լուսաւորւած ազգերը մնում են յարտու շփոթ  
կացութեան մէջ: Սոսկալի պատերազմներ են բռնկել, մէկը միւսի-  
դէմ զօրքեր են մշել, որպիսին չէ տեսնուած բարբարոսների արշա-  
ւանքներից ի վեր, և ներկայ ժամիս, երբ մենք խօսում ենք, ամ-  
բողջ Եւրոպան թնշանօթներ ձուլելու տենդով է բռնուած, զրահա-  
կիր նաւեր է կառուցանում և մարզանքներ անում... Աւանչ, ես որ

մտորագայում Ոսկի Գարի աւելու մն էի երազում մարդկութեան համար, երբ անմեղ պատանեկութիւնը կորստար պիտի կազմէր Denin du Village-ի եղանակներն երգելու, և երբ ծերունիները, իմաստութեամբ լեցուն, բուսաբանութեամբ պէտք է զբաղէին:

— Ի՞նչ կարելի է անել, հառաչեց Ալփէրը: Համոզել պէտք է թէ ուրականները նրա համար են միայն անմահ, որ ժամանակի ընթացքում կորցնեն իրենց վերջին քաղցր անուրջները... Հեցամտերնք ուրեմն խղճի մասին մեր քննութեանը... Ի՞նչ է ձեր կարծիքը, ասէք ինչդեմ, Յեղափոխութեան հռչակաւոր յաղթանակների մասին... Քաղաքացիների միջև ընդհանուր հաւասարութիւնը օրինակի համար:

— Որ նա գոյութիւն ունի օրէնքներում և ոչ բարքերում. և փոհմական արխստկրատիային, որն անկասկած ծանր զեղծումներ էր գործում, փորարիներ է այժմ դրամականը, որ առաւել ամօթալի անիրաւութիւն է. բաւական է մի ակնարկ գցել ներկայ հասարակութեան վրայ հասկանալու համար, թէ այնքան էլ շուտ սպասելի չէ միակ իսկական արխստկրատիայի յաղթանակը, որը պէտք է ընդունելի լինի ամենքի կողմից—արժանիքի ու առաքինութեան արխստկրատիան:

— Իսկ ձեր կարծիքը եկեղեցու աշխարհական վարչութեանը ենթարկելու մասին:

— Ես հաստատում եմ թէ դրանից ծագել է պաշտօնական մի տեսակ անաստուածութիւն, որը ողբալի կը թւի նոյն իսկ իմ Սաւոյարի Փոխանորդին <sup>1</sup>... Մենք բոլորովին մենակ ենք, այնպէս չէ, և այստեղ չի գտնուում քաղաքային խորհրդատուն, որ, եթէ մեզ լսելու լինէր, զի պահածէր և առանց այլ և այլի մեր շիրիմներն այս անգամ տեղափոխել կը փար մի որ և է անյայտ տեղ... Սթէ ուղում էք, ձեր ականջում ասեմ, որ այս օրից ի վեր՝ երբ ամեն կարելի միջոցներով ֆրանսիական ժողովրդի կրօնական հաւաքը ոչնչացրին, այդ ժողովուրդը աւելի սպիտակաբարձական ու առաւել շփախտ դարձաւ:

— Մտում է քննել ազատ մամուլի առաւելութիւնները - ասեց

<sup>1</sup> Ռուսի. Le vicaire de Savoyard.

այն ժամանակ Վոլրէրը—և այդ արդէն ինձ է վերաբերում: որովհետև ես եմ, մի որոշ մտքով, լրագրութեան (journalisme) հայրը: Արդ՝ մահուլը նմանում է գործիս, որ այսօր Դափափերում եմ իրիսի կերպով: Նրա մէջ ասել եմ ամեն բան և մտաւանդ ինքս ինձ հակասել: Նրա մէջ գտնուում է, Դէս ու Դէն, մի երես ճշմարտութեամբ և արդարութեամբ թու թռուս, սակայն նրանից կարելի է լուսանքներ, խարհութեան և լրբութեան մի լու ժողովածու կազմել:

—Վոլրէր, բարեկամս, Դուք ամբողջ ձեր կեանքի ընթացքում կրօնական համբերատարութիւն էք քարոզել... Սակայն իմացէք, որ անցեալ ամառ քաղաքապետին մէկը խաղի շքանշան ստացաւ այն առիթով, որ հաղորդւող փոքրիկ աշխիկների մի թափոր էր ցրել ժանդարմների միջոցով... Այս մասին ինչ կասէք:

—Ռուսօ, ընկերս, Դուք շարունակ ձեռ-մեծ պահանջներ էք անում բարոյականութիւնից և Դուք ցանկանում էիք համոզէք զիզի-պիզի զարդարւած Դքսուհիներին, որ իրենց զաւակները սեփական կաթնով կերակրեն... Սակայն, իմացէք, որ ներկայումս ունինք գեղեցկուհի Ֆեմինիստներ, որոնք յօդաւածներ են ստացում բոլորովին խախտէն, թէ մայրական ստիճքով սըննդելը՝ իբր բարբարոսութիւնից մի մնացորդ Դիտելի է... Ի՞նչպէս է թուում ձեզ այս:

Այստեղ երկու փիլիսոփաները նայեցին միմեանց երես, ինչպէս հասարակօրէն ասում են, աչքերը չորս արած, ապա բացականչեցին մէկը միւսից չեպոյ:

—Օօ, Ռուսօ, մեր պարաստած յեղափոխութիւնը արդեօք չի սնանկացել Դիտելածով:

—Օօ, Վոլրէր, Մարդու Իրաւունքների Յայտարարումը (Declaration des Droits de l'Homme) լոկ միսփիֆիկացիա չէ արդեօք:

—Եւ որ առաւել ծանրակշիռ է, շարունակեց Կարսօ՝<sup>1</sup> պաշտ-

<sup>1</sup> Տուլուզցի վաճառական, սուր ամբաստանւած իրօրդու սպանման համար, որպէս զի արգելէր նրան բողոքականութիւնը չորտրել իբր թէ պարլամենտի վճռով նրան ողջ-ողջ նահապակեցին անիւի պարտով, բայց որի անմշտութիւնը հաստատեց Վոլրէրը 1765 թւին իր հռչակաւոր հոգեպաշտպանողական ճառով:

պանը հարցն այն է, թէ նմանօրինակ խնդիրներ փանք իրար այս մենաւոր գեպնափորներում իբրև փարաբաւած ուրւականներ, ինչպիսին մենք ենք. այլ հարցն այն է, որ բազմաթիւ ուշիմ մտքեր՝ ոգևորւած բացարձակ ճշմարտութեամբ, իրենք իրենց են ուշղում նոյն այդ հարցերը գոռոզարար, և յուսահարում են ու զըզում քաղաքագէտների փաւած ամեն մի չափաւոր ու խուսափող վճռից և վերջացնում են բացաշկարա անիշխանականութեամբ:

—Ո՛ւմն էք ասում այդ, շարունակեց փիկին յը Վարանի նախկին սիրականը: Բաւական վշտացած եմ յրանից. որովհետև իմ գրւածներիցն են քաղել այդ բոլորը ձեր ասած մարդիկ: Ես չէի արդեօք, որ հրապարակ նետեցի մի անգամ այն գեղեցիկ պարատորը, թէ մերժելի է ամեն մի ընկերութիւն, որ հիմնւած է մի քանիսների անիրաւութեան ու միւսների փրմարդութեան վրայ: Այնպէս որ այսօր, ուրացած լինելով իմ բոլոր քիմերաները, ցաւում եմ փեսնելով քն անհամբեր անիշխանականներին իրենց ուսմբերի պատրոջը վառելիս Ընկերական Գաշնագրից <sup>2</sup> (=Contrat Social) պարուած մի թերթիկով:

Վորտէրն և Ռուսօն երկար կը շարունակէին, անկասկած, իրենց զրոյցը, եթէ այն միջոցին շամբարանի հեււում ոտնաձայն չըլլուէր: Շիրիմները պղծոյններից մէկն էր նա, որ իրանձրևի հովանին մոռացած լինելով՝ գալիս էր պահապանի ուղեկցութեամբ յետ վերցնելու: Եւ որովհետև մաքուր ոգիները, ինչպէս վերն ասել էինք, չեն խորժում գործ ունենալ հասարակ մահկանացուների հետ, երկու սոււերները շոգիացան մի վայրկենում ու անհետացան կախարչանքի պէս:

<sup>2</sup> Ժան-ժաք Ռուսօի Նշանաւոր հեղինակութիւններից մէկն է: Ծ. Թ.